Կինաց, նստաւ, երկու լիւկ էլ զինք կերաւ. էլաւ, էկաւ մօտ խրոխպէր։

Զէնով-Ցեովան դարձաւ, էկաւ դեախ[1]) տուն. էկաւ, դալալին[2]) էսաց.—Կանչը յամէն մարդ ուր դարգըխնիր[3]) շինը, ուր յերտըսնիր կալնը, քեանի տաւար չ'էկած. որ տաւար կեայ, կէլիր, արջիր, ասլանքտիր, կափլանքտիր բիրադի խա[4]) տաւրին տը կեան, շուռ առնին քեաղքի մէջ, որ որ տեսնայ՝ սիրտ կ'պատրուրը, կ'մեռնը. դարգախնիր շինէք, չուր[5]) մուխ կ'տայ. որ մուխ իտու, սարը ջանավար[6]) կ'քաշուը, կ'երթայ սար, նուր կ'ըլնէք ձի տրունիր կ'պացէք, ձի տաւարնիր կ'գիւմէք[7])։

Ցիրիկուն Դաւիթ նախիր ժողվէց, առէց, իրի։

Քեաղքցիք բիրադի տռնիր, դարգըխնիր շինիցին, յերտըսնիր կալնիցին, էլ մարդ տիւս չ'էլաւ։ Նախիր իրի, լցուաւ քեաղաք։

Դաւիթ կանչէց, էսաց.

«Բաց էրէք ձիր տռնիր, բաց էրէք[8]),
Վիր մէկ էր, էրիր իմ երկուս,
Վիր երկուս էր, էրիր իմ ութ,
Վիր տաս էր, էրիր իմ քսան,
Վիր քսան էր, էրիր իմ քեառասուն,
Վիր քեառասուն էր, էրիր իմ յիսուն,
Վիր յիսուն էր, էրիր իմ խարիր»։

Մարդ զտռնիր չ'էբաց։

Դաւիթ դժարացաւ, կանչէց, էսաց.—Ով Աստուած, քի կ'կանչէմ, որ ինչ խալալ ը, էստեղ մնայ, որ ինչ խարամ ը, դառնայ ուր տեղ էրթայ։

Խարամքիր չոկուան, կեացին. խալալքիր մնացին, տէրուանք[9]) էլան, գիւմիցին։

---

[1]) Դէպի։ [2]) Մունետիկ։ [3]) Դարբաս, դուռ։ [4]) Հետ, միասին։ [5]) Մինչև։ [6]) Գազան։ [7]) Գիւմել, անասունները գոմում կապել։ [8]) Երգ է։ [9]) Տէրերը։